ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ М. НАЛБАНДЯНА
SHIRAK STATE UNIVERSITY AFTER M. NALBANDYAN
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ SCIENTIFIC PROCEEDINGS

Պրակ Բ
Выпуск Б
Issue B

2018 № 1

ՀՏԴ 82.0 ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ-ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱ. ԱՆՀԱՏԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԱՆՁՆԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՄԱՆ

Կարապետյան Ս.Ա.

Բանալի բառեր՝ Գարսիա Լորկա, Եղիշե Չարենց, ճակատագրի ողբերգականություն, անհատի դրամա, նորարարություն:

Հոդվածում վերլուծվում է 20-րդ դարի երկու հանճարեղ գրողների՝ Ե. Չարենցի և Ֆ. Գ. Լորկայի ստեղծագործությունների և ճակատագրերի ողբերգական նմանությունը: Առաջին անգամ համեմատական վերլուծության են ենթարկվում նրանց կենսագրական տվյալները, թեմատիկ, պատկերային համակարգի առանձին դրսևորումներ:

Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի երկու գրողների օրինակով ցույց տալ հասարակական-քաղաքական իրադարձությունների ազդեցությունը անհատի վրա և արվեստագետի որոնումների ուղին ճգնաժամային պատմաշրջանում, որի արդյունքում նա ստիպված էր վերաիմաստավորել կոնցեպտուալ և գեղագիտական արժեքները:

Ե. Չարենցը (1897-1937) նորագույն շրջանի հայ գրականության սկզբնավորողն է. ընդարձակել է գեղարվեստական մտածողության հայեցադաշտը, կանխորոշել գրականության հետագա զարգացման ուղիները, թարմացրել լեզուն, տաղաչափությունը, հարստացրել գրական ժանրերը: 1922թ. նա հանդես եկավ «Երեքի դեկլարացիա» հոդվածով, ինչը գրական մանիֆեստ էր և ազդարարում էր նորարարության մուտքը հայ գրականություն և, մասնավորապես, պոեզիա: Հոդվածում թեև ժխտվում էր անցյալի գրական վաստակն ու փորձը, գրական ավանդը, անգամ մեծ գրողների գրական մեթոդն ու ժառանգությունը, բայց այն նպատակ ուներ թարմացնել և հունի մեջ դնել նոր խնդիրների առաջ

կանգնած հայ գրականությունը: Ավելի ուշ Չարենցը հրաժարվեց այս գաղափարներից, եղավ գրողի «հոգեկան մեծ դարձը» [1, 344] և նա կարողացավ ստեղծել իր բարձրարժեք ստեղծագործությունները: Անգնահատելի է Ե. Չարենցի ոչ միայն տաղանդի մեծությունը, այլև ընդգծելի է նրա թողած ազդեցությունը հայ գրականության վրա:

Ֆեդերիկո Գարսիա Լորկան (1898-1936) իր ժամանակի գրական շրջանակի առաջնորդն էր և «27-ի սերնդի»[2] ամենավառ ներկայացուցիչը: Լորկան մտերիմ էր ոչ միայն որոշ բանաստեղծների, այլ նաև սյուռեալիզմի համաշխարհային ներկայացուցիչներ Սալվադոր Դալիի և կինոռեժիսոր Լուիս Բունյուելի հետ: Այսպիսով, Լորկան գտնվում էր իսպանական ավանգարդիզմի էպիկենտրոնում: Լորկան 20-րդ դարի իսպանական գրականության ամենավառ գրողն է, իսպանական դրամատուրգիայի գագաթներից մեկը: Նա բազմաթիվ դասախոսություններում («Դուենդեի տեսությունը և խաղը», «Դոն Լուիս Գոնգորայի պոետական կերպարը»և այլն) ներկայացնում է իր գրողական հավատամքն ու գեղագիտական հայացքները: Նա դեմ էր գաստեության «արվեստի ապամարդկայնացման»-ը, հանդես էր գալիս որպես նորարար (հետաքրքրված էր սյուռեալիզմով), բայց միաժամանակ Լորկայի քնարերգությանը բնորոշ են ազգային մշակույթի հատկանիշները և բանաստեղծության հատուկ երաժշտականությունը:

Ինչպես Ե. Չարենցի առաջին բանաստեղծություններում և հատկապես «Երեք երգ տխրադալուկ աղջկան» (1914թ.) վեցէջանոց գրքույկում զգացվում էր Վ. Տերյանի ազդեցությունը, այդպես էլ Լորկայի՝ 1921թ. Լույս տեսած «Բանաստեղծությունների գիրք» վերնագրով առաջին ժողովածուում զգացվում էր Ռ. Դարիոյի և Խիմենեսի ազդեցությունը: Ավելի ուշ երկուսն էլ հաղթահարում են գրողական ազդեցությունները, ունենում որոնումների շրջան, հանդես գալիս որպես նորարարներ, ինչը և նրանց դարձնում է 20-րդ դարի հայ և իսպանական գրականության գագաթներ:

Երեսնական թվականները երկու գրողների համար դարձան ստեղծագործական վերելքի տարիներ: Այս ընթացքում նրանք գրեցին ոչ միայն մեծաթիվ բարձրարժեք ստեղծագործություններ, այլև բանաստեղծությունների ժողովա-

---

[2] «27-ի սերնդի» գրողներից էին Խորխե Գիյենը, Պեդրո Սալինասը, Ռաֆայել Ալբերդին, Խերարդո Դիեգոն,Լուիս Սերնուդան, Էմիլիո Պրադոսը: Անվանումը կապված է 1927թ. Լուիս դե Գոնգորայի մահվան երեքհարյուրամյակին նվիրված մշակութային միջոցառման հետ, որի մասնակիցներին էլ անվանեցին «27-ի սերնդի» ներկայացուցիչներ:

ծուներ, որ նոր որակ էին բերում իրենց գեղարվեստական հատկանիշներով, գաղափարային և կոմպոզիցիոն լուծումներով: 1929թ. Լորկան մեկնում է Ամերիկա, և ճանապարհորդական տպավորություններն արտացոլվում են «Բանաստեղծը Նյու Յորքում» ժողովածուում, իսկ 1933թ. Չարենցը գրում է «Գիրք ճանապարհի» ժողովածուն: Հետաքրքիր օրինաչափությամբ այս ժողովածուները երկար տարիներ արգելվեցին և միայն գրողների մահից հետո հրատարակվեցին՝ առանց գրաքննության ենթարկվելու:

20-րդ դարի իրադարձություններն իրենց ողբերգականությամբ չեն տարբերվում Իսպանիայում և Խորհրդային միությունում: 1920-ական թվականներին իշխանության է գալիս Ստալինը, իսկ 30-ական թվականների Իսպանիայում՝ գեներալ Ֆրանկոն. երկու բռնապետեր, որոնք պատճառ դարձան հազարավոր խեղված ճակատագրերի: Երկու բանաստեղծներն էլ անչափ զգայուն էին և անմիջապես իրենց պոեզիայով անդրադառնում էին ժամանակի իրադարձություններին: Սա էր այն հիմնական պատճառը, որ 1936թ. նոյեմբերին Չարենցը մեղադրվում է որպես հակահեղափոխական, նացիոնալիստ, տրոցկիստ, ահաբեկիչ, ենթարկվում տնային կալանքի, ավելի ուշ՝ ձերբակալվում:

1936թ. օգոստոսին ձերբակալվում է Գ. Լորկան. նրան մեղադրում էին «ռուսների լրտեսը լինելու, նրանց հետ ռադիոկապով առնչվելու և համասեռամոլ լինելու մեջ»[5, 476]: Նույնատիպ դաժանության զոհ դառնալով՝ երկու բանաստեղծները միաժամանակ դատապարտվում են մահվան և նրանց երկուսի գերեզմանների գտնվելու վայրը մնում է անհայտ: 1936թ. հունիսին՝ մահվան նախաշեմին Լորկան գրում էր.

Եվ չեմ ուզում ողբ.
պետք է նայել
մահվան աչքերի մեջ…
Լռությու՛ն,
Լռությու՛ն ասացի:
Կխեղդվենք սգո ծովում…
Լսո՞ւմ եք ինձ…
Լռությու՛ն,
Լռությու՛ն ասացի,
Լռությու՛ն[3]: (Տողացի թարգմ. մերն է-Ս.Կ.)

[3] *Y no quiero llantos. // La muerte hay que mirarla// cara a cara. //¡Silencio!//¡A callar he dicho! //¡Nos hundiremos todas en un mar de luto! //¿Me habéis oído?//¡Silencio, silencio he dicho!// ¡Silencio! (Մեջբերման աղբյուրը՝ https://www.lainsignia.org/2004/junio/cul_065.htm):*

Լռության գերխիտ պատկերը տեսնում ենք Չարենցի վերջին շրջանի ստեղծագործություններում և հատկապես «Անվերնագիր» բանաստեղծությունում.

Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա

***

Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
ՈՒ լռություն մի անստվեր, անդուռ, անդող,
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
Մահվան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող:

1936թ. օգոստոսի 18-ին Լորկան գնդակահարվեց Վիսնարից Ալֆակար տանող ճանապարհին:

Վարկածներից մեկի համաձայն (ըստ Սամսոն Ստեփանյանի վկայության, որ ենթադրաբար Չարենցի գնդակահարողն է)՝ 1937թ.-ի նոյեմբերի 27-ի վաղ առավոտյան Չարենցը գնդակահարվել է Ֆանտան գյուղի մոտ:

Լորկայի պոեզիայում գերակշռող է մահվան թեման, և սա պայմանավորված է նրան տանջող մահվան վախով: «Նրա (Գարսիա Լորկայի-Ս.Կ.) պոեզիայում պահպանվում է մահվան ժողովրդական-ճակատագրապաշտական սպասումը և ժամանակակից մարդու տխրությունը՝ առաջացած սեփական անկրկնելիության գիտակցումից և դրանից բխող ոչնչացման անխուսափելիությունից»[2, 386]:

Ողբերգականությունը Լորկայի ողջ ստեղծագործության չափումներից մեկն է, նրա աշխարհազգացողության որակը: Ողբերգական աշխարհազգացողությունը բնութագրական է 20-րդ դարի շատ բանաստեղծների համար, որոնք գիտակցելով իրենց հրաժարումը հավաքական ամբողջից ձգտում էին հաղթահարել այդ բացը [2, 411]: Լորկան հասկանում էր, որ ժամանակակից արվեստի դժվար, հիվանդագին զարգացումը կապված է արվեստագետի և արվեստի՝ հավաքական ամբողջի առանձնացումից [2, 418], ինչը կամա թե ակամա հանգեցնում է բանաստեղծի ու անհատի անձնական դրամային: «Ես ինձ զգում եմ շատ հեռու ներկայիս պոետական անկումից և երազում եմ առաջիկա լուսաբացի մասին, երբ անցյալի անհասկանալի զգացումը կվերադառնա» [3, 102],-գրում էր նա ընկերոջը 1929թ.:

Մահվան թեմային Չարենցն անդրադարձել է իր «Մահվան տեսիլներում»: «Կյանքի տրամաբանությունը նրան տիրականորեն մղում է դեպի մահվան թեման, և նա բազում թելերով կապվում է ողբերգական իրականության և նորագույն բանաստեղծության այն հոսանքի հետ, որը բերում էր մոխիրների և

մահերի ճանապարհի պատմությունը»[1, 419],-գրում է գրականագետ Հ. Թամրազյանը: Մեծ ողբերգության թեման ծավալվում է նրա ստեղծագործության մեջ՝ ունենալով գրական և հատկապես կենսական ակունքներ [1, 420]:

Մառ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մոխիր է մովից մաղում,-
Մեռնում է մութը մթնշաղում,-
Մառ մորմոքում է մայրամուտը: -

Մտորումներս մահ են, մութ են,
Մարխե մտքեր են միայն մխում,-
Եվ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մրուր է մովից մաղում…

Մահվան թեման ակնառու է ոչ միայն Չարենցի վերջին շրջանի գործերում, ինչը պայմանավորված էր սեփական մահվան կանխագուշակմամբ և առաջիկա աղետի զգացողությամբ, այլև նախորդ շրջանի ստեղծագործություններում: Սեփական ժողովրդի ողբերգական ճակատագիրը և հատկապես ցեղասպանության, հայրենազրկումի փաստերը ավելի ընդգծեցին մեծ բանաստեղծի ու հայրենասերի մտահոգությունները: Եթե առաջին շրջանի ստեղծագործություններում մտասևեռորեն պատկերված է իր ժողովրդին հետապնդող մահվան ուրվականը, ապա կյանքի վերջին տարիներին ավելանում է նաև անձնական դրամայի ողբերգականության զգացողությունը:

Հետաքրքիր նմանություն կարելի է տեսնել նաև երկու պոետների մահից հետո նրանց արվեստի բարձր գնահատման և արժևորման հարցում: Անգամ նույնատիպ զուգահեռ կարելի է տանել նրանց մահից հետո հայտնի դարձած անտիպ բանաստեղծությունների միջև:

Լորկայի «Մութ սիրո սոնետներ» վերնագրով բանաստեղծությունները և Չարենցի անտիպները, որոնց մի մասը, ի դեպ, Չարենցը սոնետ է անվանում, բովանդակային և գաղափարային առումով նման են, անգամ որոշ բանաստեղծությունների բնութագրական է պատկերային համակարգի նմանությունը:

Անկասկած թեման բազմաշերտ է, սակայն ներկայացվող ծավալի դեպքում անհնար է հոդվածում համանման բանասիրական և կենսահոգեբանական փաստերի լիարժեք խորացումը, ինչը, սակայն, փորձելու ենք ներկայացնել մեր հետագա ուսումնասիրություններում:

Այսպիսով, վերոհիշյալ ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես 20-րդ դարի երկու տաղանդավոր գրողներ իրարից անկախ անցել են ստեղծագործական նույնատիպ ճանապարհ, անդրադարձել նմանատիպ թեմաների, ստեղծել համանման գեղարվեստական պատկերային համակարգ:

Ե. Չարենց-Գ.Լորկա գրողական դիմագծի ուսումնասիրությունն ակներև է դարձնում արվեստագետների մեծությունն ու տաղանդը. երկուսն էլ, կանգնած լինելով ազգային մշակույթի ու պոեզիայի ակունքներին մերձ, այնուամենայնիվ, կարողացան իրենց պոեզիայով ազգայինից գնալ դեպի համամարդկայինը, որի արդյունքում ազգային խնդիրների պատկերումը գեղարվեստական տեքստում ձեռք բերեց համընդհանուր, համամարդկային նշանակություն:

Егише Чаренц-Гарсия Лорка:
Личностная и внеличностная трагедия и драма
Карапетян С.А.

В статье анализируется судьбы трагических совпадений двух произведений выдающихся писателей 20-ого в.,Чаренца и Лорки. Впервые делается сравнительный анализ их автобиографичеких данных, тематики, отдельных представлений визуальной системы.

Это исследование имеет две цели: на примере этих писателей показать влияние общественно-политических событий на индивида и путь исканий художника в исторической эпохе, в результате чего ему пришлось переосмыслить концептуальные и эстетические ценности.

Yeghishe Charents-Garsia Lorka:
Personal and Impersonal Tragedy and Drama
Karapetyan S.A.

The article analyzes tragic similarity between 20th century two genius writers E. Charent's and F. C. Lorca's work and destiny. Their biographical data, thematic, separate images of the characteristics are being comparatively analyzed.

This study aims at illustrating the impact of social and political events on the

individual and the artist's quest during crises era, as a result of which he had to rethink the conceptual and aesthetic values.

Գրականություն

1. Թամրազյան Հ. Եղիշե Չարենց: Երևան: «Արևիկ», 1987: 477 էջ:
2. Тертерян И. А. Испытание историей: Очерки испанской литературы XX века. Москва. Наука. 1973. С. 418.
3. Gallego Morell A. «Federico García Lorca: Cartas, postales, poemas y dibujos». Madrid. Ed. Moneda y Credito. 1968. 175 pág.:
4. García Lorca F. La casa de Bernarda Alba, https://www.lainsignia.org/2004/junio/cul_065.htm
5. Gibson Ian. Federico García Lorca, De Nueva York a Fuente Grande (1929-1936), vol. II. Barcelona, Grijalbo. 1987. 611 pág.:

Տեղեկություններ հեղինակի մասին
Կարապետյան Միրանուշ Անդրանիկի
Էլ. փոստ՝ siranushk@inbox.ru

Տրվել է խմբագրություն 11. 12. 2018